

Այսպիսի աշխատութիւն մը, զոր օրինակ, Պոլսի մէջ շատ կարեւոր է Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ համար. վասն զի, ինչպէս որ դիտել տուած ենք, Ս. Լուսաւորիչն է Կ. Պոլսի ամէնէն հին եւ առաջին եկեղեցին: Իրաւ է որ Կ. Պոլսի մէջ, Ս. Լուսաւորիչէն յառաջ եկեղեցիներ կը յիշուին. բայց ատոնք յոյն կամ լատին եկեղեցիներ են որ Հայոց տրուած են: Իսկ ուղղակի Հայոց համար եւ հայու դրամով առաջին եւ հին եկեղեցին շինուած է հոս, Ղալաթիա, 1391ին, Ս. Լուսաւորիչ անուամբ: Եւ այս եկեղեցին է որ Պոլսի Առաջնորդութեան եւ Պատրիարքութեան մէջ կենդրոն եղած է ազգային-եկեղեցական գործերու. Ս. Լուսաւորիչն է որ ծնունդ եւ անունդ տուած է Կ. Պոլսի ազգային կրթական բոլոր հաստատութիւններու կեդրոնական վարժարանին:

Ահա՛ հաստատութիւն մը, որ Կ. Պոլսի Հայոց մտաւոր կեանքին մէջ հանգրուան մ'է. հաստատութիւն մը, որու պէտքն ու արժէքը այն ատեն պէտք է քննուի երբ համբերատար եւ ձեռնահաս մէկը ձեռնարկէ գրելու Պալատայոց կրթական Պատմութիւնը: — Վասն զի հերիք չէ՛ կեդրոնական վարժարան ըսել ու անցնիլ. անոր պատմութիւնը պէտք է գրուի՝ ցոյց տալու համար թէ ինչո՞ւ հաստատուեցաւ կեդրոնականը, ի՞նչ էր, ի՞նչ ըրաւ, ի՞նչ է եւ ի՞նչ պիտի ըլլայ:

Ես՝ հրճուանքով եւ կրթութեան վրայ խարսխուած ամէնէն անկեղծ դաւանանքովս կը յայտարարեմ թէ կոյտի, այդ գրասէր եւ կրթասէր Մեծ-Պատրիարքին բաղձանքներուն յետնադոյն եւ եղանակաւորուած մարմնացումն է կեդրոնականը: Եւ ասի պարզ զուգահիւզութեան արդիւնք մը չէ: Վասն զի կոյտի ըմբռնումն ու գործունէութիւնը վարժարանի-Եկեղեցւոյ մասին՝ հայ ազգի ամէնէն մեծ գէմբերուն, մեղի գիր գրականութիւն տուող բեմընաւոր գլուխներուն ըմբռ-